ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<< >> հոկտեմբերի 2010թ. N -Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ>> N 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 3-րդ կետում <<Ծրագրի 4-րդ կետի>> բառերը փոխարինել <<Ծրագրի 4-րդ կետի և 36-րդ կետի 4-րդ ենթակետի>> բառերով:

2) 4-րդ կետում <<և բնակելի տները>> բառերը փոխարինել <<, բնակելի տները և բնակելի տարածքները>>

3) 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<2) Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական այլ մարմինների կամ Երևանի քաղաքապետի կամ Երևանի թաղային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների և կարգադրությունների կամ պետական մասնակցությամբ ընկերությունների (պետական ձեռնարկությունների) կողմից տրամադրված օրդերների (այլ փաստաթղթերի) կամ սահմանված կարգով ուժի մեջ մտած դատարանի վճիռների հիման վրա մշտապես (փաստացի) բնակվում են դրանցում>>.

4) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով.

<<3) վերաբնակեցվել են վթարային քանդման ենթակա շենքերից և նորակառույց շենքի բնակարանները տիրապետում և օգտագործում են վարձակալության իրավունքով.

4) բազմազավակ են, ունեն 6 և ավելի երեխաներ, չունեն սեփական բնակարան կամ ունեն բնակպայմանների բարելավման կարիք.

5) հանրապետության մշակութային և տնտեսական զարգացման բնագավառում մեծ ներդրում ունեցող արվեստի, մշակույթի և այլ ոլորտների ականավոր գործիչներ են, որոնք

(նրանց ընտանիքների անդամները) չունեն սեփական բնակարան կամ ունեն բնակպայմանների բարելավման կարիք>>:

5) Ծրագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1.-րդ կետով.

<<4.1. Սույն ծրագրի իմաստով 4-րդ կետում նշված <<բնակպայմանների բարելավման կարիք>> ունեցող է համարվում այն անձը (անձինք) կամ ընտանիքը, որոնց ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականություն հանդիսացող բնակելի տանը կամ բնակարանում կամ այլ բնակելի տարածքում մեկ անձին հասանելիք բնակելի տարածքի բաժնեմասը չի գերազանցում 9.0 քառ. մետր մակերեսը և իրենք կամ իրենց հետ համատեղ բնակվող անձինք (ծնողները, ամուսինը և երեխաները) վերջին հինգ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում չեն օտարել բնակելի տուն կամ բնակարան կամ այլ բնակելի տարածք>>:

6) 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթակետով.

<<3) այն անձանց, որոնք փաստացի տիրապետում և օգտագործում են իրենց բնակարաններին անմիջապես կից ոչ բնակելի տարածքները, որոնց մուտքերը բացառապես բնակարաններից են և դրանք այլ մուտք չունեն>>:

7) 14-րդ կետի 4-րդ ենթակետից հանել <<վճարման կարգի>> բառերը:

8) 19-րդ կետից հանել <<Ծրագրի 16-րդ կետում նշված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում>> բառերը:

9) 28-րդ կետի 4-րդ ենթակետում <<և բնակելի տներ>> բառերը փոխարինել <<, բնակելի տներ և բնակելի տարածքներ>>

10) 31-րդ կետը <<աճուրդի>> բառից հետո լրացնել <<կամ մրցույթի>> բառերը:

11) 34-րդ կետը <<աճուրդով>> բառից հետո լրացնել <<կամ մրցույթով>> բառերով, իսկ <<մեկնարկային>> բառից հետո լրացնել <<(նվազագույն)>> բառով:

12) 36-րդ կետի 4-րդ ենթակետը <<հանձնվել>> բառից հետո լրացնել <<Երևանի քաղաքապետի որոշմամբ>> բառերով:

13) 38-րդ կետը <<Աճուրդով>> բառից հետո լրացնել <<և մրցույթով>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ>> N 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրում առաջարկվող փոփոխությունները և լրացումները պայմանավորված են հետևյալով.

ա/ Ծրագրի 3-րդ կետը սահմանում է, որ գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ՝ բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 36-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գույքը (տարածքը) անհատույց օգտագործման կարող է հանձնվել բացառապես Երևանի ենթակայության կազմակերպություններին:

Երևան քաղաքի ավագանու և Երևանի քաղաքապետի լիազորությունների հստակեցման նպտակով առաջարկվում է ծրագրի 3-րդ կետում <<Ծրագրի 4-րդ կետի>> բառերը փոխարինել <<Ծրագրի 4-րդ կետի և 36-րդ կետի 4-րդ ենթակետի>> բառերով, իսկ 36-րդ կետի 4-րդ ենթակետը <<հանձնվել>> բառից հետո լրացնել <<Երևանի քաղաքապետի որոշմամբ>> բառերով:

բ/ Երևանի քաղաքապետարան ստացվել են քաղաքացիների բազմաթիվ դիմումներ՝ իրենց հատկացված բնակարանները, բնակելի տներն անհատույց օտարելու մասին: Դրանց ուսումնասիրությունից պարզվել է, որ ծրագրի 4-րդ կետում չեն նախատեսվել մի շարք այլ դեպքեր, երբ Երևան համայնքի սեփականություն համարվող.

1. բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները (խոսքը գնում է հանրակացարանների բնակելի տարածքների մասին, ՀՀ կառավարության մի շարք որոշումների հիմքով հանրակացարանները հանդիսանում են Երևան համայնքի սեփականությունը) հատկացվել են ՀՀ կառավարության, պետական այլ մարմինների, պետական մասնակցությամբ ընկերությունների (պետական ձեռնարկությունների) կողմից և քաղաքացիները նշված հիմքով երկար տարիներ փաստացի տիրապետում և օգտագործում են դրանք՝ որոշ դեպքերում առանց հաշվառված լինելու այդ բնակարաններում կամ բնակելի տներում, ուստի առաջարկվում է ծրագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

2. քաղաքացիները վերաբնակեցվել են վթարային քանդման ենթակա շենքերից և նորակառույց շենքի բնակարանները տիրապետում և օգտագործում են վարձակալության իրավունքով.

3. դիմողները բազմազավակ ընտանիք են, ունեն 6 և ավելի երեխաներ, չունեն սեփական բնակարան կամ ունեն բնակպայմանների բարելավման կարիք.

4. դիմողները հանրապետության մշակութային և տնտեսական զարգացման բնագավառում մեծ ներդրում ունենող արվեստի, մշակույթի և այլ ոլորտների ականավոր գործիչներ են, որոնք (նրանց ընտանիքների անդամները) չունեն սեփական բնակարան կամ ունեն բնակպայմանների բարելավման կարիք:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է ծրագրի 4-րդ կետում <<և բնակելի տները>> բառերը փոխարինել <<, բնակելի տները և բնակելի տարածքները>>, 4-րդ կետը լրացնել նոր՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով, իսկ լրացվող ենթակետերում նշված <<բնակպայմանների բարելավման կարիք>> արտահայտությունը հստակեցնելու նպատակով առաջարկվում է ծրագիրը լրացնել նոր՝ 4.1.-րդ կետով:

գ/ Երևանի քաղաքապետարան են դիմել մի շարք քաղաքացիներ՝ որոնք փաստացի տիրապետում և օգտագործում են իրենց բնակարաններին անմիջապես կից ոչ բնակելի տարածքները, որոնց մուտքերը բացառապես բնակարաններից են և դրանք այլ մուտք չունեն, ինչը համաստազուրկ է դարձնում նշված տարածքների օտարումը հրապարակային սակարկությունների միջոցով, և խնդրել իրենց կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող ոչ բնակելի տարածքներն ուղղակի վաճառքի եղանակով օտարել իրենց:

Առաջարկվում է 10-րդ կետը լրացնել նոր՝ 3-րդ ենթակետով.

դ/ Ծրագրի 14-րդ կետի 4-րդ ենթակետից անհրաժեշտություն է առաջացել հանել <<վճարման կարգի>> բառերը, քանի որ համայնքային գույքի օտարման դեպքում ամբողջ գումարն ուղղվում է Երևան համայնքի բյուջե:

ե/ Ծրագրի 19-րդ կետից անհրաժեշտություն է առաջացել հանել <<Ծրագրի 16-րդ կետում նշված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում>> բառերը, քանի որ Երևանի քաղաքապետի 12.04.2010թ. հ. 1541-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատվել է Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման աճուրդը և մրցույթը կազմակերպող ու անցկացնող մշտապես գործող հանձնաժողովի կազմը:

զ/ Ծրագրի 28-րդ կետում փոփոխությունը պայմանավորված է 4-րդ կետի փոփոխությամբ:

է/ Ծրագրով նախատեսվել է գույքը վարձակալության տրամադրելու 2 եղանակ՝ ուղղակի ձևով և աճուրդով: Առաջարկվում է նախատեսել նաև վարձակալության տրամադրելու մրցույթի եղանակը, որով հնարավորություն կընձեռվի որոշակի պայմաններով գույքի տրամադրումը, ուստի առաջարկվում է 31-րդ, 34-րդ և 38-րդ կետերում կատարել համապատասխան լրացում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 55-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ